ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-178-05.06.2019-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 5-րդ և 18-րդ հոդվածի 3-րդ մասերը «ցմահ» բառից հետո լրացնել «, բայց ոչ ավել, քան մինչև օրենքով սահմանված կարգով կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «Համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնագիտական աշխատանքային ստաժում չի հաշվառվում:» նախադասությունը:

Հոդված 3. 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «պաշտոնեական պարտականությունները կատարելու» բառերից հետո հանել «, այդ թվում՝ 2018 թվականի հունվարի 1-ից հետո ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատող համարվելու» բառերը:

Հոդված 4. Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «դ.1» ենթակետը «զինված ուժերի» բառերից հետո լրացնել «եւ այլ զորքերի» բառերով:

Հոդված 5. Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու (այդ թվում՝ կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու) օրվանից, եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում.».

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-րդ կետ.

«5) կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարելու օրվանից, եթե անձը կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարելու օրվա դրությամբ ունի այլ տեսակի կենսաթոշակի իրավունք եւ այդ տեսակի կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացրել է կենսաթոշակ ստանալու իր իրավունքը դադարելու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում:»:

Հոդված 6. Օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին նախադասությունում «լրացուցիչ փաստաթուղթ (տեղեկատվություն), որի» բառերը փոխարինել «փաստաթուղթ (տեղեկատվություն), որը հաշվի առնելու» բառերով, իսկ 3-րդ նախադասությունում «լրացուցիչ» բառը փոխարինել «այդ» բառով:

Հոդված 7. Օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում «ամսին հաջորդող ամսվա 1-ից» բառերը փոխարինել «օրվանից» բառով եւ հոդվածը 3.2-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.3-րդ մասով.

«3.3. Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելուց հետո Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջազգային պայմանագիր կնքած պետությունից ստացված կենսաթոշակի գործի հիման վրա կենսաթոշակ նշանակելիս՝ գործում առկա՝ մինչեւ կենսաթոշակի գործը Հայաստանի Հանրապետությունից այդ պետություն տեղափոխելը (կամ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելը) գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ստաժը պահպանվում է նույնությամբ, եթե օրենսդրությամբ սահմանված չեն ստաժի հաշվարկման ավելի բարենպաստ պայմաններ: Այս դեպքում՝ եթե սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է մինչեւ կենսաթոշակի գործը տեղափոխելը (կամ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելը) Հայաստանի Հանրապետությունում վճարված կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով: Սույն մասի դրույթները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է կենսաթոշակի գործում կեղծ (ոչ հավաստի) փաստաթղթեր հայտնաբերելու հիմքով:».

Հոդված 8. Օրենքի 43.1-ին հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Կենսաթոշակ ստանալու իրավունքը սույն օրենքով սահմանված կարգով չդադարեցնելու հետեւանքով սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակի գումարների չափը հաշվարկելիս՝ եթե կենսաթոշակառուն կենսաթոշակի գումարն ավել վճարված ժամանակահատվածում ունի պետական բյուջեից ֆինանսավորվող այլ կենսաթոշակի իրավունք կամ «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ծերության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստի (այսուհետ՝ նպաստ) իրավունք, ապա համարվում է, որ կենսաթոշակառուն այլ կենսաթոշակ կամ նպաստ նշանակելու դիմում է ներկայացրել այն օրը (բայց ոչ շուտ, քան այլ կենսաթոշակի կամ նպաստի իրավունք ձեռք բերելու օրը), որ օրը կենսաթոշակ ստանալու իրավունքը պետք է դադարեցվեր: Այս դեպքում կենսաթոշակ նշանակելու դիմում ներկայացնելու օրվանից մինչեւ կենսաթոշակ ստանալու իրավունքը փաստացի դադարեցնելու օրն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված այլ կենսաթոշակի կամ նպաստի գումարը համարվում է կենսաթոշակ նշանակող

ստորաբաժանման մեղքով չվճարված կենսաթոշակի գումար եւ հաշվանցվում է ավել վճարված կենսաթոշակի գումարներից:»:

Հոդված 9. Օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասում «մահանալու» բառից հետո լրացնել «կամ այդ ժամկետում վերափորձաքննության ներկայանալու, սակայն մինչեւ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից այդ անձի վերաբերյալ որոշում կայացնելը մահանալու» բառերը:

Հոդված 10. Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասում «լիազոր մարմին» բառերը փոխարինել «կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում» բառերով, իսկ 2-րդ մասից հանել «, իսկ եթե դադարել է անձի՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը, ապա դատարանի վճռի հիման վրա» բառերը:

Հոդված 11. Օրենքի հավելված 1-ի՝

1) 8-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«8. Կենսաթոշակային վճարը հաշվարկվում է այն արժույթով, որով վճարվում է միջազգային կազմակերպությունում աշխատողի աշխատավարձը եւ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է վճարվում Հայաստանի Հանրապետության դրամով:».

2) 9-րդ կետում «համար» բառից հետո լրացնել «մինչեւ» բառը:

Հոդված 12. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 7-րդ հոդվածի գործողությունը տարածվում է այն դեպքերի վրա, երբ համապատասխան դիմումը ներկայացվել է 2018 թվականի հունվարի 1-ից հետո:

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-178-05.06.2019-ԱՍ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 5-րդ և 18-րդ հոդվածի 3-րդ մասերը «ցմահ» բառից հետո լրացնել «, բայց ոչ ավել, քան մինչև օրենքով սահմանված կարգով կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «Համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնագիտական աշխատանքային ստաժում չի հաշվառվում:» նախադասությունը:

Հոդված 3. 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «պաշտոնեական պարտականությունները կատարելու» բառերից հետո հանել «, այդ թվում՝ 2018 թվականի հունվարի 1-ից հետո ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատող համարվելու» բառերը:

Հոդված 4. Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «դ.1» ենթակետը «զինված ուժերի» բառերից հետո լրացնել «եւ այլ զորքերի» բառերով:

Հոդված 5. Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու (այդ թվում՝ կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու) օրվանից, եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում.».

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-րդ կետ.

«5) կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարելու օրվանից, եթե անձը կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարելու օրվա դրությամբ ունի այլ տեսակի կենսաթոշակի իրավունք եւ այդ տեսակի կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացրել է կենսաթոշակ ստանալու իր իրավունքը դադարելու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում:»:

Հոդված 6. Օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին նախադասությունում «լրացուցիչ փաստաթուղթ (տեղեկատվություն), որի» բառերը փոխարինել «փաստաթուղթ (տեղեկատվություն), որը հաշվի առնելու» բառերով, իսկ 3-րդ նախադասությունում «լրացուցիչ» բառը փոխարինել «այդ» բառով:

Հոդված 7. Օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում «ամսին հաջորդող ամսվա 1-ից» բառերը փոխարինել «օրվանից» բառով եւ հոդվածը 3.2-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.3-րդ մասով.

«3.3. Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելուց հետո Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջազգային պայմանագիր կնքած պետությունից ստացված կենսաթոշակի գործի հիման վրա կենսաթոշակ նշանակելիս՝ գործում առկա՝ մինչեւ կենսաթոշակի գործը Հայաստանի Հանրապետությունից այդ

Deleted: 2

Deleted: 3

Deleted: 4

Deleted: 5

Deleted: Սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ, 11-րդ եւ 14-րդ կետերում նշված հիմքերով կ

պետություն տեղափոխելը (կամ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելը) գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ստաժը պահպանվում է նույնությամբ, եթե օրենսդրությամբ սահմանված չեն ստաժի հաշվարկման ավելի բարենպաստ պայմաններ: Այս դեպքում՝ եթե սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է մինչեւ կենսաթոշակի գործը տեղափոխելը (կամ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելը) Հայաստանի Հանրապետությունում վճարված կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով: Սույն մասի դրույթները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է կենսաթոշակի դրույթները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ կենս հիմքով:».

Deleted: սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ, 11-րդ եւ 14-րդ կետերում նշված հիմքով

Deleted: սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ, 11-րդ եւ 14-րդ կետերում նշված հիմքով

Հոդված 8. Օրենքի 43.1-ին հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

Deleted: *6*

«1. Կենսաթոշակ ստանալու իրավունքը սույն օրենքով սահմանված կարգով չդադարեցնելու հետեւանքով սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակի գումարների չափը հաշվարկելիս՝ եթե կենսաթոշակառուն կենսաթոշակի գումարն ավել վճարված ժամանակահատվածում ունի պետական բյուջեից ֆինանսավորվող այլ կենսաթոշակի իրավունք կամ «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ծերության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստի (այսուհետ՝ նպաստ) իրավունք, ապա համարվում է, որ կենսաթոշակառուն այլ կենսաթոշակ կամ նպաստ նշանակելու դիմում է ներկայացրել այն օրը (բայց ոչ շուտ, քան այլ կենսաթոշակի կամ նպաստի իրավունք ձեռք բերելու օրը), որ օրը կենսաթոշակ ստանալու իրավունքը պետք է դադարեցվեր: Այս դեպքում կենսաթոշակ նշանակելու դիմում ներկայացնելու օրվանից մինչեւ կենսաթոշակ ստանալու իրավունքը փաստացի դադարեցնելու օրն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված այլ կենսաթոշակի կամ նպաստի գումարը համարվում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման մեղքով չվճարված կենսաթոշակի գումար եւ հաշվանցվում է ավել վճարված կենսաթոշակի գումարներից:»:

Հոդված 9. Օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասում «մահանալու» բառից հետո լրացնել «կամ այդ ժամկետում վերափորձաքննության ներկայանալու, սակայն մինչեւ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից այդ անձի վերաբերյալ որոշում կայացնելը մահանալու» բառերը:

Deleted: *7*

Հոդված 10. Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասում «լիազոր մարմին» բառերը փոխարինել «կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում» բառերով, իսկ 2-րդ մասից հանել «, իսկ եթե դադարել է անձի՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը, ապա դատարանի վճռի հիման վրա» բառերը:

Deleted: *8*

Հոդված 11. Օրենքի հավելված 1-ի՝

Deleted: *9*

1) 8-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«8. Կենսաթոշակային վճարը հաշվարկվում է այն արժույթով, որով վճարվում է միջազգային կազմակերպությունում աշխատողի աշխատավարձը եւ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է վճարվում Հայաստանի Հանրապետության դրամով:».

2) 9-րդ կետում «համար» բառից հետո լրացնել «մինչեւ» բառը:

Հոդված 12. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 7-րդ հոդվածի գործողությունը տարածվում է այն դեպքերի վրա, երբ համապատասխան դիմումը ներկայացվել է 2018 թվականի հունվարի 1-ից հետո:

Deleted: *10*

Deleted: 3

Deleted: 5

Deleted: ներկայացված դիմումների վրա

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ 1-ԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-178-05.06.2019-ԱՍ-011/0) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Առաջարկի հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	Նախագիծ	«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 18-րդ հոդվածներում տարիքային աշխատանքային և երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակների նշանակման ժամկետները հստակեցնելու նպատակով առաջարկվում է նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. «Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ և 18-րդ հոդվածի 3-րդ մասերը «ցմահ» բառից հետո լրացնել «, բայց ոչ ավել, քան մինչև օրենքով սահմանված կարգով կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելը» բառերով»: *Հիմնավորում:* Վերը նշված հոդվածների համաձայն՝ տարիքային աշխատանքային և երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակները նշանակվում են ցմահ: Միաժամանակ, օրենքի 41-րդ հոդվածով նախատեսված են դեպքեր, երբ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է: Ըստ այդմ, անհրաժեշտ է օրենքում հստակեցնել, որ տարիքային աշխատանքային և երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակները նշանակվում են ցմահ, բայց ոչ ավելի քան մինչև օրենքով սահմանված կարգով կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելը:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան լրացում: Ըստ այդմ, խմբագրվել է նաև հոդվածների համարակալումը, իսկ 1-ին հոդվածի դրույթները շարադրվել են ներկայացվող տարբերակի 3-րդ հոդվածում:	Ընդունվել է (համաձայն 21.06.2019թ. հանձնաժողովի արտահերթ նիստի թիվ 7 արձանագրության):
		Նախագիծ	Նախագիծը լրացնել հետևյալ	Առաջարկությունն	

			բովանդակությամբ նոր հոդվածով. «Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «Համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնագիտական աշխատանքային ստաժում չի հաշվառվում:» նախադասությունը:»: ***Հիմնավորում:*** Առաջարկվում է սահմանել, որ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական ստաժում հաշվառվում է նաև համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը:	ընդունվել է, կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է (համաձայն 21.06.2019թ. հանձնաժողովի արտահերթ նիստի թիվ 7 արձանագրության)
		Նախագիծ	Նախագծի 5-րդ (ներկայացվող տարբերակի 7-րդ) հոդվածով առաջարկվող 3.3-րդ մասում. 1. 1-ին նախադասությունում «Սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ, 11-րդ եւ 14-րդ կետերում նշված հիմքերով կենսաթոշակ» բառերը փոխարինել «Կենսաթոշակ» բառով, 2. 1-ին և 2-րդ նախադասություններում փակագծերի միջից հանել «սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ, 11-րդ եւ 14-րդ կետերում նշված հիմքով» բառերը, 3. Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Սույն մասի դրույթները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է սույն հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում նշված հիմքերով:» ***Հիմնավորում:*** Առաջարկվում է նախատեսվող 3.3-րդ մասի դրույթները տարածել բոլոր այն դեպքերի վրա, երբ կենսաթոշակ է նշանակվում կենսաթոշակային ապահովության բնագավառում միջազգային պայմանագիր կնքած պետությունից ստացված կենսաթոշակի գործի հիման վրա (անկախ կենսաթոշակ ստանալու իրավունքը ՀՀ-ում դադարեցնելու պատճառից): Միաժամանակ, բացառություն է սահմանվում այն դեպքի համար երբ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է կենսաթոշակի գործում կեղծ (ոչ հավաստի) փաստաթղթեր հայտնաբերելու հիմքով:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել են նախագծում համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է (համաձայն 21.06.2019թ. հանձնաժողովի արտահերթ նիստի թիվ 7 արձանագրության)

		Նախագիծ	Նախագծի 10-րդ (ներկայացվող տարբերակի 12-րդ) հոդվածի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 7-րդ հոդվածի գործողությունը տարածվում է այն դեպքերի վրա, երբ համապատասխան դիմումը ներկայացվել է 2018 թվականի հունվարի 1-ից հետո:»: ***Հիմնավորում:*** Առաջարկվում է հստակեցնել անցումային դրույթները, այդ թվում հղումները, պայմանավորված հոդվածների համարակալման վերանայմամբ:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է (համաձայն 21.06.2019թ. հանձնաժողովի արտահերթ նիստի թիվ 7 արձանագրության)